ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Ք. ՉԱՐԵՆՑԱՎԱՆ
15.07.2021Թ.

Համայնքի ավագանու նիստի աշխատանքների ներկա են ավագանու 8 անդամները:

Բացակայում են *Նորիկ Վարդանյանը, , Կ.Դավթյանը, Մ.Գասպարյանը, Ա. Փանոսյանը , Պ.Մնացականյան, Տ.Եփրեմյան:*

Նիստը վարում է համայնքի ղեկավար Հ.Շահգալդյանը:

Համայնքի ղեկավար Հ.Շահգալդյանի հրավերով ավագանու նիստին մասնակցում են ***համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ս.Մուրադյանը, համայնքապետարանի աշխատակազմի բաժնի պետեր Վ.Բարսամյանը, Բ. Բալբաբյանը, Ա. Ծերունյանը, ,Գ.Աֆյանը և գյուղերի վարչական ղեկավարները:***

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

Հաստատել համայնքի ավագանու թիվ 5 հերթական նիստի օրակարգը՝

1. Չարենցավան համայնքի 2021 թվականի բյուջեի 2-րդ եռամսյակի եկամուտների և ծախսերի կատարողականի հաղորդման մասին:
2. Չարենցավան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 56-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
3. Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) հատվածից գումար հատկացնելու մասին:
4. Չարենցավան համայնքի ղեկավարին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կազմը հաստատելու մասին:
5. Չարենցավան համայնքի 2021 թվականի հողային հաշվեկշիռը համաձայնեցնելու մասին:
6. Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող բնակարանը նվիրատվության եղանակով վարձակալին օտարելու համաձայնություն տալու մասին:
7. Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածքները աճուրդային կարգով օտարելու թույլտվություն տալու մասին:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

Եթե առարկություններ չկան, քվեարկության եմ դնում որոշումը օրակարգային հարցի վերաբերյալ:

Կողմ - 6 **դեմ - 1** **ձեռնպահ -1**

Գրիգորյան Հակոբ **Բաբայան Նարեկ**

Օրակարգն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

1. ***Չարենցավան համայնքի 2021 թվականի բյուջեի 2-րդ եռամսյակի եկամուտների և ծախսերի կատարողականի հաղորդման մասին:***

/Զեկ. Գ.Ափյան/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի ***առաջարկում եմ*** ի գիտություն ընդունել Չարենցավան համայնքի 2020 թվականի բյուջեի 2-րդ եռամսյակի եկամուտների և ծախսերի կատարողականի մասին համայնքի ղեկավարի հաղորդումները (կցվումէ):

Համայնքի ղեկավարի տեղակալ Վ. Չիլինգարյան

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-6 **դեմ - 1** **ձեռնպահ -1**

Գրիգորյան Հակոբ **Բաբայան Նարեկ**

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

2. Չարենցավան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 56-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

/Զեկ. Գ.Աֆյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, «Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-34-րդ հոդվածներով,***առաջարկում եմ.*** Չարենցավան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 17-ի «Չարենցավան համայնքի 2021 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 56-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները համաձայն հավելված N 2-7-ի բյուջեի ծախսային մասում անհրաժեշտություն է առաջանում կատարել հետևյալ փոփոխությունները՝

Թույլատրել 2021թ. ընթացքում համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից ֆինանսական միջոցներ ուղղել համայնքի բյուջեի ֆոնդային մաս: Թույլատրել գնումները կատարել «Գնումների մասին» օրենքի համաձայն:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-6 **դեմ - 0** **ձեռնպահ -2**

Գրիգորյան Հակոբ

Բաբայան Նարեկ

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

3. Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) հատվածից գումար հատկացնելու մասին:

/Զեկ. Գ.Ավֆյան/

Հաշվի առնելով Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի 2-րդ թաղ. 2 շենք 16 բնակարանի բնակիչ ***Յուրի Սաքունցի*** 2021 թվականի հուլիսի 08-ի թիվ 3270-16, Չարենցավան քաղաքի 7-րդ թաղ. 12 շենք 19 բնակարանի բնակիչ ***Սևակ Նորիկի Հագեյանի*** 2021 թվականի հուլիսի 08-ի թիվ 3271-16 և Չարենցավան քաղաքի 6-րդ թաղ. 13 շենք 31 բնակարանի բնակիչ ***Լիլիթ Վալենի Խաչատրյանի*** հուլիսի 14-ի թիվ 3344-16 դիմումները ֆինանսական աջակցություն հատկացնելու մասին և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով՝ ***առաջարկում եմ.*** Չարենցավան համայնքի սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) 4729 «Այլ նպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվից 150.0 հազ. դրամ հատկացնել ***Յուրի Սաքունցին,***
Չարենցավան համայնքի սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) 4729 «Այլ նպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվից 150.0 հազ. դրամ հատկացնել ***Սևակ Նորիկի Հագեյանին,***
Չարենցավան համայնքի սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) 4729 «Այլ նպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվից 150.0 հազ. դրամ հատկացնել ***Լիլիթ Վալենի Խաչատրյանին,***

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-6 **դեմ-0** **ձեռնպահ-2**

Գրիգորյան Հակոբ

Բաբայան Նարեկ

Լսեցին.

4. Չարենցավան համայնքի ղեկավարին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կազմը հաստատելու մասին:

/Զեկ. Ս.Մուրադյան/

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի թիվ 631-Ն որոշումը, հաշվի առնելով Չարենցավան համայնքի ղեկավարին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կազմում փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը, ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածով, առաջարկում եմ..Չարենցավան համայնքի ղեկավարին կից ստեղծել խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով հետևյալ կազմով՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ս. Մուրադյան - աշխատակազմի քարտուղար

Հանձնաժողովի քարտուղար՝ Վ.Մուսայելյան - առաջատար մասնագետ- իրավաբան

Հանձնաժողովի անդամներ՝ Ա.Զաքարյան- կրթության, մշակույթի, սպորտի, երիտ. և սոց.աջակց. բաժնի պետ

Շ. Մելտոնյան- կրթության, մշակույթի, սպորտի, երիտ. և սոց.աջակց. բաժնի գլխավոր մասնագետ

Ա.Գասպարյան- Չարենցավան համանքի ավագանու անդամ

Միասնական սոցիալական ծառայության_ներկայացուցիչ

ՀՀ ոստիկանության Կոտայքի մարզային վարչության Չարենցավանի բաժնի ներկայացուցիչ

Չարենցավանի «Բժշկական կենտրոն» ՓԲԸ աշխատակից

«Առաքելություն Հայաստան» ԲՀԿ-ի աշխատակից

Ուժը կորցրած ճանաչել Չարենցավան համայնքի ավագանու 2019 թվականի հունվարի 18-ի «Չարենցավան համայնքի ղեկավարին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կազմը հաստատելու մասին» թիվ 4 որոշումը:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-6 **դեմ - 1** **ձեռնպահ -2**

Գրիգորյան Հակոբ **Բաբայան Նարեկ**

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

5. Զարենցավան համայնքի 2021 թվականի հողային հաշվեկշիռը համաձայնեցնելու մասին:

/Զեկ.Բ.Բալբաբյան/

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության հողային հաշվեկշիռը կազմելու կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ 656 որոշման պահանջներով՝, առաջարկում եմ. տալ համաձայնություն Զարենցավան համայնքի ղեկավարի կողմից ներկայացված Զարենցավան համայնքի 2021 թվականի հողային հաշվեկշռի վերաբերյալ՝ համաձայն հավելվածի:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-6 **դեմ-1** **ձեռնպահ-1**

Գրիգորյան Հակոբ **Բաբայան Նարեկ**

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

6.Զարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող բնակարանը նվիրատվության եղանակով վարձակալին օտարելու համաձայնություն տալու մասին:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով և 77-րդ հոդվածով,առաջարկում եմ. տալ համաձայնություն համայնքի սեփականություն հանդիսացող բնակարանը նվիրատվության եղանակով վարձակալին օտարելու՝ համաձայն ներքոնշյալ քաղաքացու դիմումի:

Հ/Հ	ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ	ՀԱՍՑԵՆ	ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ	ԻՆՉ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ Է ՀԱՏԿԱՑՎՈՒՄ	ՀԱՏՈՒՑՄԱՄԲ ԿԱՄ ԱՆՀԱՏՈՒՅՑ
1.	Մայրամ Վիրաբյան	1 Ա-230	11 290 000	Սեփականություն	Անհատույց
2.	Օնիկ Դավթյան	6-5-2	11 190 000	Սեփականություն	Անհատույց
3.	Լաուրա Հովսեփյան	7-19-27	4 844 000	Սեփականություն	Անհատույց

Համայնքի ղեկավարի կողմից գույքագրման փաստաթղթերում կատարվելիք փոփոխությունները ներկայացնել օտարման գործընթացն ավարտելուց հետո:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան
Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-6 դեմ-0 ձեռնպահ-2

Գրիգորյան Հակոբ

Բաբայան Նարեկ

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

7.Զարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածքները աճուրդային կարգով օտարելու թույլտվություն տալու մասին:

/Զեկ.Բ.Բալբաբյան/

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, առաջարկում եմ. թույլատրել Զարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածքները աճուրդային կարգով օտարելու համաձայն հավելվածի/կցվում է/:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

Քվեարկության եմ դնում որոշումը

Կողմ-7 դեմ-0 ձեռնպահ-1

Բաբայան Նարեկ

Գրիգորյան Հակոբ

Բաբայան Վալերի

Գասպարյան Անատոլի

Երիցյան Գագիկ

Խլղաթյան Արսեն

Վարդանյան Նորայր

Վարդանյան Սարգիս

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Նիստն արձանագրեց Ս.Մուրադյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ.Կ.ՇԱՀԳԱԼԴՅԱՆ